

ՆԱԻԹԱԹՐՋԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

VII

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ, ՀԱԳՈՒՍՏԸ ԵՒ ԱՊՐՈՒՍՏԸ

Բանւորական բնակարանների խնդիր—ահա իսկապէս բանւորական աշխարհում եղած բազմաթիւ հարցերից ամենահեշտ լուծելին, բայց որի վրայ դեռ ևս ամենաթույլ կերպով են նայում գործերի գլուխ կանգնածները:

Աշխատւորներին կամ գործարանատէրերն ու հանքատէրերն են բնակարան տալիս կամ իրանք վարձում են մասնաւոր բնակարաններ: Դրամատէրերը երբեմն ունենում են զօրանոցների (казарма) նման շինւած սենեակներ բանւորների համար, երբեմն էլ փող են տալիս վարձում մասնաւոր սենեակ, որովհետեւ կամ եղածը չի բաւականացնում բոլորին կամ ամենեւին չեն ունենում սեփական տներ: Դրամատէրերի յատկապէս իրանց բանւորների համար շինել տւած բնակարանները բաւականին յարմարութիւններ են ունենում, համեմատելով մասնաւոր վարձով տրուող շինութիւնների հետ: Մասնաւոր բնակարանները պատրաստում են մանր-մանր չարչի դրամատէրեր և նոր հարստանալու ճանապարհի վրայ կանգնած կառավա-

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 10, 11, 12 և 1893 թ. № 3 և 4.

րիչներ ու խանութպաններ: Շինել են տալիս մի շարք սենեակներ կապալով վերցրած հողերի վրայ, աշխատելով, որքան կարելի է, էփան կերպով վերջացնել, քրէհով են տալիս այդ սենեակները, մինչև պայմանաժամը հասնում է: Ժամանակը հասնելուց յետոյ կամ պայմանը նորից նորոգում են հողատէրերի հետ կամ անշարժ կաջքը թողնում, հեռանում: Ահա թէ ինչու մասնաւոր բնակարաններից շատ քչերն են յարմար բնակութեան համար: Այդ տեսակ հողային կապալները կապած են 12 տարով և միևնոյն տեսակ պայմաններով:

Նաւթադաշտի բոլոր բանւորները բնակւում են այդ տեղում սփռած բնակարաններում, իսկ Սև-Քաղաքի բանւորների մի մասը գործարաններում և արհեստանոցներում, միւս մասը Բագու քաղաքում: Բագուի ամենաէփան բնակարաններ ունեցող թաղը Վամախուս թաղն է, որ գտնւում է Սև-Քաղաքի բոլորովին հակադարձ կողմում: Բնական է, որ բանւոր դասակարգի մեծ մասը այդ թաղում պէտք է տներ վարձէր: Այդպէս էլ է: Հայ բանւորների մեծ մասը կենում են այդ թաղում, իսկ ռուս և գերմանացի բանւորները երկաթուղու կայարանի մօտ եղած մի քանի փողոցներում, որոնք իսկպէս քաղաքից դուրս են համարւում:

Բանւորներից նրանք, որոնք ընտանիք ունին և օրավարձով են ծառայում Սև-Քաղաքում, միշտ երեկոները գնում են տուն, ամեն օր մի քանի վերստ (մօտ 3—5 վ. միայն գնալը) ճանապարհ կտրելով առաւօտեան և երեկոյեան ծանր աշխատանքից յետոյ: Թէև ամեն տեսակ հաղորդակցական յարմարութիւններ կան քաղաքի հեռու թաղերի և Սև-Քաղաքի մէջ, բայց օրավարձի ծառայող մշակբանւորի կամ արհեստաւորի համար բոլորովին հնարաւոր չէ օրական 20 կոպէկ միայն գնալ-գալու վրայ ծախսել: Բոլորովին ուրիշ է ամսով ծառայողների գործը. դրանց հազիւ 2—3 շաբաթը մի անգամ թողնում են տուն գալու Սև-Քաղաքից. ի հարկէ հազիւ թէ այդպիսի դէպքում ոտով գնաց բանւորը... Իսկ նաւթադաշտում ծառայողներին ինքն ըստ ինքեան հասկանալի է, որովհետև քաղաքի կայարանից մինչև Սաբունչի ուղիղ 12 վերստ է. ուրեմն աշխատաւորի համար սաստիկ դժւար կը լինի գտնէ ամիսը մի անգամ հանդիպել իրանց տուն: Վերջապէս նաւթի արդիւնաբերա-

կան գործն այնպիսի մի դործ է, որ պահանջում է ամեն մի բո-
պէ բանորի անհրաժեշտ ներկայութիւնը:

Բնակարանների հարցում ևս ամեն մի ազգութիւն ցոյց է տա-
լիս իր բնորոշ կողմերը, կուլտուրայի զարգացման վերաբերեալ.
պարսկահայտակ բանւորները և թուրքերը կենում են ամենավատ
բնակարաններում, լեզգիները դրանցից փոքր ինչ աւելի լաւ, հայ
բանւորները սրանցից էլ լաւ, իսկ ռուս և գերմանացի բանւորնե-
րը, որքան ոյժերը պատում են, աշխատում են տանկի բնակարան-
ներ վարձել: Բայց բանւորի ոյժը կը պատէ, եթէ չխառնւին ու-
րիշ հանգամանքներ, որոնց մասին չետոյ:

Բնակարանների վատութիւնը կարող է արտայայտուել թէ ար-
տաքին կողմից, շինութեան յատուկ թերութիւնների պատճառով և
թէ կեցողների թւի և սննեակի մեծութեան համապատասխան չա-
փի պակասութեան և կեղտոտութեան պատճառով:

Մի զարմանալի և խղճալի տեսարան են ներկայացնում նաւ-
թաղաշտի բոլոր տներն ընդհանրապէս, հաշուելով նոյն իսկ հարուստ
ռոճիկ ստացող ծառայողների և դրամատէրերի տներն էլ դրանց
մէջ. ցածր, նեղ ու փոքրիկ շինութիւններ, կարծես մարդիկ խնա-
յել են սննեակների պատերը մի փոքր իրարից աւելի հեռու դնել.
ամեն մի քայլ հող շատ թանգ է գնահատուում, մանաւանդ նաւ-
թահորերի մօտիկ տեղերում: Բոլոր տների պատերը, լուսամուտներն
ու դռները մրոտած ու նաւթոտած են, այնպէս որ առաջին հա-
յեացքից, քանի դեռ չէք մտել փոքր ինչ աւելի մանրամասնութիւն-
ների մէջ, կը կարծէք, թէ այդ տեղերում մեծամասնութիւնը քիչ
թէ շատ իրար հաւասար մարդկանցից է կազմւած. ծուխն ու
նաւթը հաւասար գոյների են վերածել բոլոր բնակարանները: Նոյն
ուպաւորութիւնը չեն թողնում Սև-Քաղաքի բնակարանները: Այս-
տեղ դուք կը տեսնէք հարեմական մեղկութիւն արտայայտող գողո-
րիկ շէնքերից սկսած մինչև ամենախարխուլ և ողորմելի խրճիթ-
ները: Բարձրացէք Սև-Քաղաքի գործարանների արևելեան ծալրերը,
ուր գտնուում են Նորէլ Ֆիրմայի ինտիլիգենտ ծառայողների բնա-
կարանները՝ ձեր աչքի առաջ բացւած կը տեսնէք, ծովսփից փոքր
ինչ հեռու, Բանդլի աւազոտ հողի համար շատ անսովորական, գե-
ղեցիկ պարտէզներ (2—3 հատ), որոնց մեծ ծառալի մէջ, փոքրիկ

ծառերով, թփերով ու փառաւոր ծաղիկներով շրջապատւած, բարձրանում են, հպարտ կերպով, շատ գողտրիկ տներ ու տնակներ, որոնց նմանը նոյն իսկ Բագում քիչ են պատահում։ Ամբողջ Բագում և իր շրջականերում միակ բանաստեղծական դիրքով ու սիրունիկ ձևերով պատրաստուած տեսել եմ այդ բնակարանները։ Գեղեցիկ պարտէզներ, գեղեցիկ տներ, շքեղ ասրուստ ու զարդարանք, քանդակազարդ պատշգամբներ և փոքր ինչ հեռուն էլ ծովը, իսկ խաղաղ երեկոներին փառաւոր լուսինը—արծաթափայլ լուսով... Այդ մեղկացնող և ֆանտաստիքական տպաւորութիւնից դեռ ևս չազատուած, յանկարծ ձեր աչքին են ընկնում դրանցից դէպի արեւմուտք գտնւող բազմաթիւ բանաւորական բնակարանները. փոքր, նեղլիկ, պատերից մի քանի քար դուրս պրծած, լուսամուտի մի երկու ապակին կոտրւած, կեղտոտ, նեղլիկ դռներ ու լուսամուտներ, չորս կողմը ցեխ կամ աւազ ու փոշի... Ի՞նչ են նմանութիւն միւս տների հետ։ Այդտեղ կեցողների համար լուսնի լոյսն էլ արծաթափայլ չէ, խաղաղ գիշերն էլ, ծովի վեր տպաւորութիւնն էլ, ասողազարդ երկինքն էլ... ոչինչ, ոչինչ գին չունին բնու թեան հրապոյրները դրանց համար. աշխատանքից ջարդւած, խոնջացած մարմին, համարեա միշտ կիսակուշտ ստամոքս, կեղտով ու ցեխով շրջապատւած—էլ ով կը կարողանայ գնահատել գեղեցկութիւն, էլ ձեռք ջեր չեն բթանալ։ Շարունակեցէք ձեր ուղին դէպի քաղաք. իջնում էք Նորէլ եղբայրների մաքուր և հսկայական դործարանի առաջով. ձեր աջ ու ձախ կողմերում եղած շինութիւնները զարմանք են ազդում իրանց գեղեցիկ ու կանոնաւոր շինւածքով, մանաւանդ ձախ կողմում եղած մի փառաւոր տուն—դա Նորելի ընդհանուր կառավարչի բնակարանն է։ Դրանց կողքերին համարեա կպած են էլի ողորմելի բնակարաններ. էլի ցեխ ու կեղտ, էլի անքուն խղճութիւն...

Գոնէ արտաքուստ այդ տեսակ խիստ տարբերութիւնից զրկւած է նաւթադաշտը, հաւասարեցնող նաւթի ու ծխի շնորհով։ Իսկ երբ մտքը սկսում է աւելի մօտենալ, քննել դրանց ներքինը, այն ժամանակ նաւթահանքի շրջակայքի տների կարծեցեալ հաւասարութիւնը օդն է ցնդում և նրա տեղը բռնում է մեր կեանքում այնքան տարածւած բողոքող անարդարութիւնը. մի տեղ տեսնում էք ինքնաբաւական, չաղացած բուրժուական դէմքեր կամ

Նրբացած արխատոկրատիքական արտայայտութիւն և բաւականին պատկառելի քանակութիւնով ճարպ պարունակող ահագին փորեր իրանց յատուկ պարագաներով (ուտելու և խմելու պարագաներն ամենից առաջ), իսկ միւս սեղում կեղտ, զարշահոտութիւն և կեղտից փթած և այս ու այն անկիւններում պատն ի վեր դարսած անկողիններ, որոնք ցեխի և աղբակոյտերի միջից հանած փալասների տպաւորութիւն են թողնում. մի փարչ—ջրի համար, ջրի թիթեղեայ դաւաթ ու մի երկու կեղտոտ բաժակներ... ահա բոլորը: Այսքան էլ բաւական է ցոյց տալու համար, թէ որքան խիստ է զանազանութիւնը դրամատիրական կենսքի մէջ:

Որպէս զի այդ համեմատութիւնը լոկ խօսքեր չմնան և երեւակայութեան արդիւնք չերեւայ, կը բերեմ այստեղ մի քանի փաստեր որոնք կը ներկայացնեն բանւորական աղքատիկ բնակարանների ծաւալը. աւելորդ է հարուստ տների համար փաստեր բերել, որովհետեւ ամեն մարդ ծանօթ կը լինի դրանց հետ և կարող կը լինի համեմատել, գոնէ մօտաւորապէս:

Դաշտավայրի խճուղու մի ճիւղի կողմում, Ռոտշիլդի նոր փորւած հորից (1891 թ.) 40—50 քաչլ հեռու գտնւում է մի բանւորական մասնաւոր բնակարան, երկու սենեակից բաղկացած, երկուսի մուտքն էլ առանձին. առաջին սենեակի մէջ կենում էին 8 Ղարաբաղցի հայ մշակ-բանւորներ: Սենեակի երկարութիւնն է 6 արշին, լայնութիւնը 4 արշին, երկարութիւնը 4 արշին: Բովանդակութիւնը դուրս է գալիս $6 \times 4 \times 4 = 96$ խորանարդ արշին, որ բաժանելով 8 հոգու վրայ, կը տաւանանք ամեն մէկի համար 12 խոր. արշ. օդ: Միւս սենեակի մէջ կենում էին 7 հոգի պարսկահպատակ բանւորներ: Դրա ծաւալը հաւասար էր առաջինի $\frac{2}{3}$ մասին, այսինքն 64 խոր. արշին, որ բաժանելով 7 մարդու վրայ կը տաւանանք $9\frac{1}{7}$ խորանարդ արշին օդ իւրաքանչիւրին: Տիւման և ընկ. երկաթի պահեստի դէմ ու դէմը, մի քիչ դէպի արեւելք Աղաճով-Բուզաղովների նաւթամուղ կայարանից, կայ մի փոքրիկ և մութ սենեակ—երկարութիւնը 4 արշ., լայնութիւնը 4 արշ., բարձրութիւնը 3 արշին, մէջը կենում են 3 հոգի, որոնցից մէկն ամբողջ օր տան դերձակութիւն է անում: Այդ սենեակում կայ և մեծ վառարան (պլիտա) և կարճ մեծ մեքենայ ու դաղդան, որոնք նոյնպէս տեղ են բռնում:

Ուրեմն սենեակի ծաւալն է $4 \times 4 \times 3 = 48$ խոր. արշ., որից եթէ հանենք 6 խոր. արշ. (վառարանի և դազգայի բռնած տեղը), կը մնայ 42 խ. արշին:—Բաժանենք 3-ով, կըստանանք իւրաքանչիւրին 14 խ. արշ. օդ:—Դէպի Մաշտաղա տանող գլխաւոր ճանապարհներից մէկի աջ կողմում, բաղնիքի մէջ կայ մի բնակարան, երկու սենեակից բաղկացած, որոնց մէջ կենում են Նորբիի հանքերում ծառայող 29 լեզդի բանւորներ: Բնակարանը տրւած է հանքատիրոջ կողմից, ուրիշից քրէհով վերցրած: Երկու սենեակների մուտքերն առանձին են: Առաջին սենեակի երկարութիւնն է 8 արշ., լայն. 5, բարձ. $4 \frac{1}{2}$ արշին,—ուրեմն բովանդակութիւնը հաւասար է $5 \times 8 \times 4 \frac{1}{2} = 180$ խոր. արշին, որ բաժանելով մէջը կեցող 14 հոգու վրայ, կըստանանք իւրաքանչիւրի համար մօտ 13 խոր. արշ. օդ: Միւս սենեակը ճիշդ դրա չափն է, միայն մէջը կենում էին 15 մարդ: Ուրեմն սրանց բաժինը կը լինի 12 խ. արշին: Այդ սենեակների դէմ ու դէմը, Գասպարեան և ընկերութեան նոր շինած ջրաբաժան կայարանի կողքին կայ մի կլոր, գլանաձև սենեակ, որ կարծես հաւաքուն լինի: Դրա բարձրութիւնը հազիւ 3 արշին եղաւ, իսկ տրամագիծը ուղիղ 3 արշին: Ուրեմն սրա շատակը հաւասար է մօտ 7 քառակուսի արշին: Այդ մակերևութը բազմապատկելով բարձրութեան վրայ, ստանում ենք 21 խ. արշ. ծաւալ: Այդ ողորմելի հաւաքնի մէջ կենում են 4 հոգի, ուրեմն ամեն մէկի համար $7 \frac{1}{4}$ խ. արշ. օդ: Ինչպէս են ոտները մեկնում, որ իրար չխանգարեն, ինձ համար անհասկանալի մնաց: Դեռ այդտեղ բնակւող լեզդիներից մէկը ուրախ-ուրախ ասում էր. «Աղա, համարեւ ամեն օր զոնաղ ենք ունենում մեկ մօտ դիշերոդ»:

Ի հարկէ սրանք (ոչ վերջինը) ամենավատերից կամ լաւերից չեն, այլ սրանք միջին տեսակ բանւորական բնակարաններ են, որոնցից վատը, մեր բերած օրինակից երևում է, որ կայ, իսկ լաւը նոյնպէս կայ: Ահա դրանցից լաւի մի օրինակ. Ադամով-ձգնաւորեան նաւթահանքի բանւորների բնակարանի երկարութիւնն է 13 արշ. լայնութիւն 12 արշ., լարձր է 6 արշ., որի մէջ կենում են 25 հոգի, ուրեմն ամեն մէկի համար ընկնում է 37 – 38 խոր. արդ օդ կամ մօտ $1 \frac{1}{3}$ խ. սաժէն: Բայց չպէտք է մոռանալ, որ սա օրինակելի բնակարաններից մէկն է:

Համեմատեցէք այդ թւերը առողջապահութեան համար պահանջած չափերի հետ... իբրեան զանազանութիւն: Բնական է, ուրեմն, որ այդքան օդով բաւականացող բանւորները չեն կարող ունենալ առողջ թոքեր և առողջ մարմին: Նոր եկած բանւորները լինում են առհասարակ թարմ, առողջ, գեղեցիկ, առողջ, իսկ մի քանի ամսից չետոյ արդէն այնքան են հիւժուում, դեղնում, չետ-չետ գնում, որ շատ ժամանակ դժւար է լինում ձանաչել: Քայքայող պատճառներից ամենագլխաւորը օդի անմաքրութիւնն է, բնակարանի ծաւալի փոքրութիւնը և նրա կեղտոտութիւնը: Ինչպէս բնական երեւոյթներից շատ շատերը, այս էլ սաստիկ դանդաղ աստիճանաբար է կատարւում: Մի տան մէջ ապրող բանւորները և նրանց շրջապատողները չեն կարող նշմարել, թէ ինչ փոփոխութիւն է կատարւում թէ մերոնց, թէ միւսների մէջ, բացց ամեն առաւօտեայ թարմութիւնից զուրկ, խոնջացած և թթւած երեսները կենդանի փաստեր են այդ սենեակների օդի պակասութեան և նորա սպանիչ ազդեցութեան:

Համարեմ մի և նոյնն են Սե-Քաղաքի ու Բիբի-էյբաթի բանւորական բնակարանները: Այս ասածս վերաբերում էր մշակ-բանւորներին. սրանից շատ հեռու չեն գնում արհեստաւոր բանւորները: Վարձում են մի սենեակ և մի խոհանոց և մէջը լցւում երեք ընտանիք, եթէ ամուսնացած են և հետները բերած: Հայ բանւորները կամ թուրքերն ու լեզգիները շատ բացառիկ դէպքերում բերում են իրանց հետ իրանց կանանց. իսկ ռուսների մէջ այդ շատ սովորական է:

Բնակարանների այդ չափին համապատասխան է և նրա թէ արտաքին, թէ ներքին մաքրութիւնը.—մուր, կեղտոտ օդ, ցելս ու հող սենեակի ներսն ու դուրսը, աւելորդ փայտի կտորներ, հացի փշրանք և այլն և այլն միշտ տարածւած են լինում այդ տեսակ տներում: Իսկ նաւթը, նաւթաշաղախ շորերը... Մի անգամ, լեզգիների բնակարանում, ուզեցի ձեռք տալ ներքնակի տեղ ծառայող մի փալասի. իր կողմից բռնեցի, ձուռալով պատուեց, այնքան նա փոխ էր կեղտից: Նաւթաղաշտի բոլոր ծառայողների երեսները հաւասարապէս մրոտւած են, այնքան մրոտւած, որ կարծես մուրը թափանցել է կաշու մէջ: Իսկ բանւորի ամբողջ մարմինը, որ 2, 3

ամիսը մի անգամ բաղնիսի երես չի տեսնում, կարծես կազմած է սև կաշուց: Ո՞ւր ուզում է գնաց բանւորը, ամեն տեղ դաշտավայրում և Սև-Քաղաքում նրան սպասում է մուր և կեղտ, կեղտ և մուր...

*
* *
*

Իսկապէս բանւորների հագուստի մասին խօսելու այնքան էլ կարիք չկայ, որովհետև ամենքին էլ յայտնի է բանւորի հագուստը. բայց նաւթային գործում, ուր աշխատում են շատ ազգութիւններ, հարուստներն էլ ունին իրանց աւանձնապատկութիւնները, որոնց մի քանի խօսքով հաղորդելն աւելորդ չի լինի:

Հայ և ռուս արհեստավորներից ու մշակներից շատերը յայտնի են ամենքին, լեզգիներինը և պարսկահպատակներինը՝ քչերին: Լեզգին հագնում է մի քիչ նման վրացի գիւղացիներին, իսկ պարսկահպատակը—մի քիչ նման Ցաճկա-Հայաստանի Խոտնջրցիներին: Նեղ անդրավարտիկ, կարճ և նեղ բաճկոն, տակից ժիլետի ձևով մի կրծկալ (դոշլուդ), հասարակ տրեխներ կամ չստեր և մի տարօրինակ գլուխարկ, որի արտաքինը մահուդ է, ներքինը բամբակ և աստառ. չորս կողմը մի շերտ հաստ և սև մազի նման, կարծես ձմերուկը կիսել, մէջը դատարկել և կէսը գլուխներն են անցկացրել—ահա պարսկահպատակի շորերը: Լեզգու շորերի մէջ միակ աչքի ընկնողը նրանց բռնչիկ (գանգուր) փափախն է, որ թէև շատ փոքր բան է, բայց շատ մեծ տեղ է բռնում: Այդ փափախի մագերը խուճուճ-խուճուճ թափւում են կողի ճակտի ու աչքերի վրայ, հասնում երբեմն մինչև քիթը և շատ վայրենի տեսք տալիս Քաղստանի առանց այն էլ վայրենի զաւակներին:

Բոլոր ազգութիւնների բազմատեսակ հագուստները նաւթի հասարեցնող ոչոքին երկար չեն դիմանում. առաջ գոյներն է սևանում մրից, յետոյ ամբողջապէս նաւթակուլուլ դառնում ու կեղտոտւում, փտում ու պատառոտւում: Կարճ ժամանակից յետոյ բոլոր բանւորների հագուստները, բացի գլխարկներից, կորցնում են իրանց բնորոշ յատկութիւնները: Տեսնում էք, յանկարծ, ռուս գիւղացու կապոյտ շապիկ և կոտորւած եւրոպական գլխարկ, կամ մի հին պիջակ և հայկական մեծ փափախ, ում ինչ պատահեց, ով ինչ

կարողացաւ հասարակ տօնավաճառում էժան գնով «վերպատել», այն էլ կը հագնի կամ կը ծածկի Միայն հայ և լեզգի բանւորներն են մտածում տուն դարձած ժամանակը մի ձեռք լաւ շոր կարել և հագնել. ուս և պարսկաստանցի բանւորի համար այդ ցանկութիւնը գոյութիւն չունի։ Այդպէս էին ասում իրանցից մի քանիսը, այդպէս է ցոյց տալիս կատարող իրականութիւնը։

*
* *

Բազւի և իր շրջակայքի բոլոր բանւորները կարելի է երկու մասի բաժանել. ա) բանւորներ, որոնք եկել են «մի քանի կուպէկ հաւաքելու» և վերադառնալու իրանց տեղը կամ խանդարւած կեանքը շարունակելու կամ այդ հաւաքած փողով մի նոր գործ սկսելու համար և բ) բանւորներ, որոնք եկել են այդ տեղ գործելու, որովհետեւ այդտեղ առ այժմ գործերն աւելի լաւ, աւելի տանելի են բանւորների համար։ Սրանք վերադառնալու մասին չեն էլ մտածում, որովհետեւ տնտեսական և հասարակական ուրիշ պայմաններն արդէն անհնար են դարձրել նրանց իրանց տեղերում ապրուստ ճարելը։ Սրանք նոյն պատրաստականութեամբ վաղը կը գնան Թիֆլիս, եթէ գործերն այնտեղ աւելի յաջող դիրք ստանան և ձեռնտու լինին։ Իսկական բանւոր դասակարգ կազմում են սրանք, որովհետեւ կամ շատ երկար, կամ միշտ մնում են բանւորական շրջանում, եթէ բաղդի բերմունքով մի կերպ չհարստանան։ Առաջին տեսակ բանւորը ժամանակաւոր է. նա եկել է նեղ-լայն ապրելու, արիւնքրտինք թափելու, կուպէկներ հաւաքելու, որ կամ հարկերը տալ, — ինչպէս պարսկահպատակների մեծ մասը, և կամ հողի պակասութիւնից դուրս, իբրեւ աւելորդ աշխատող ձեռք, իրանց տանը պարսպ չմնալու համար եկածները — ինչպէս Ջանգեզուրի կամ Ղարաբաղի պանդուխտների մեծ մասը, լեզգիները և այլն։ Եթէ ուշադրութեամբ հետեւելու լինենք այդ տեսակ ժամանակաւոր բանւորների ապրուստին և կեցութեանը, կը տեսնենք, որ դրանց բոլոր ձգտումները մի բան են արտայայտում. որքան կարելի է զրկանքներով, սեղմած ապրել, որքան կարելի է «շատ կուպէկներ խնայել», որ շուտով կարելի լինի հայրենիք վերադառնալ և կամ շարժութիւնով պարսպել («Հայ գիւղացու սև օրը» — Ս. Մելիք-Շահնազարեանի,

«Մուրճ» 1890 № 3—5), կամ դառն երեսին մնացած, օր հացի կարօտ ընտանիքին օգնութեան հասնել («Պանդուխտ» — 1, էօ): Ահա բանւորների այն մասը, որոնց համար կարելի է վստահ կերպով ասել, թէ աշխատելու տեղում ամենակծօխ, ամենավատ և զրկանքներով լի կեանք են անցկացնում: Սրանց համար տաք կերակուրը, մաքուր հագուստը, բաղանիս գնալը, մաքուր սպիտակեղէնը—նոյն իսկ զիւղացիների գործածածների նման, կեանքի ամենաթիթեւ և մատչելի զւարճութիւնները, արտալայտած նոյն իսկ հարեցողութեան ձեռք, բոլորովին պակաս են, կարծես դրականական օրէնքներով արգելւած լինեն: Եւ այնքան զօրեղ է այդ արգելող զգացմունքը—շուտ վերադառնալ—որ նրանք ամենամեծ յաջողութեամբ յետ են պահում իրանց ուրիշներին հետեւելուց, ամենամատչելի և զբաւիչ կենսական զւարճութիւններից: Այդ տեսակ բանւորները, նկատելու է, որ միշտ եկած են լինում առանց ընտանիքի:

Հետաքրքրական է առաջ բերել այստեղ մի քանի թւեր, որ պարզ լինի, թէ ինչ աստիճանի է հասնում այդ բանւորների «խնայողական եռանդը»: Ամեն մի Ֆիրմա բաժանում է իր ծառայողներին տետրներ, որոնցով կարող են որոշ խանութից ապառիկ ապրանք վերցնել: Բանւորներն իրանց մօտ փող չեն պահում, եթէ նոյն իսկ աւելորդ էլ ունենում են, այնպէս որ հաստատ կարելի է ասել, որ նրանց ուտեստի ծախսն ամբողջապէս զրւած է լինում այդ տետրների մէջ: Ահա այդ տեսակ տետրներից մի քանիսի ամսական գումարները. 1 ուրբ. 20 կոպ., 1 ու. 50 կ., 1 ու. 80 կ., 2 ու., 2 ու. 20 կ., 2 ու. 40 կ., 2 ու. 50 կ., 3 ու., 3 ու. 50 կ.: Առաջին 5 թւերը պարունակող տետրները պատկանում էին շուտ վերադառնալ ցանկացող բանւորներին, իսկ միւսները մշտական բանւորներին: Առաջինների տետրներում նշանակւած էր միայն «հաց, հաց, հաց», իսկ երկրորդներում երբեմն աչքի էին ընկնում «թամբաքու» (ծխախոտ), «շաքար», իսկ երբեմն էլ նոյն իսկ «միս» կամ «պանիր»: Եթէ մարդ միայն ամենավատ տեսակի ցամաք հացով ապրի, էլի ամսական 1 ու. 20 կ. ապրելն անհնար է: Ամենասովորական հացի ծախսը շատ վերադառնալ ուղեցողների համար կադմում էր 1 ու. 80 կ. 2 ու. թիւը, իսկ 1 ու. 20 կ. ծախսել էր միայն մի բանւոր: Երբ ես իմ կասկածս յայանցի 1 ու. 20 կոպէկով ապրելու

վերաբերութեամբ, գրքոյկներն ինձ ցոյց տուող խանութպանը պատասխանեց. «այդ մինը շատ անպիտան ժխտն էր. առնում էր միայն չորացած, մի քանի օր չծախւած հացերի կտորներ, որ ես շատ էփան էի տալիս նրան» Դէ, խղճում էի. քեասիբ մարդ էր:

Հացի ծախսերից յետոյ գալիս է բնակարանի ծախսը: Եթէ բանւորն ապրում է դրամատիրոջ բանւորանոցներում (казармы), ապաւում է բնակարանի հոգսից, թէեւ այդտեղ հիւանդութիւններն ու չարչարանքն աւելի շատ են, իսկ եթէ ոչ—միանում են մի քանի երկրացիներ կամ ծանօթներ, վարձում են ամսական 8—10 մանէթով մի սենեակ և լցւում մէջը: Քիչ չեն այն դէպքերը, երբ սենեակում պառկելու տեղ չլինելու պատճառով, շինել են սենեակի պատերի կիսից մի ուրիշ չարկ էլ, գիւղական «սեքիւռ»ների նման, և այնտեղ էլի մի քանի մարդ ներս լցրել: Այդ վերադառնալ ուղեցող բանւորներից շատ քչերը բնակարանի համար ծախսում են ամսական 1 մանէթ անդամ:

Զարհուրելի է սրանց շորերը. պատառուած, բոլորովին նաւթակուլու և ցեխոտ Շորը կորցրել է իր գլխաւոր նշանակութիւնը դրանց համար. նա չի ծառայում այլ ևս մարմնի կենսական տաքութիւնը կանոնաւորելուն, այլ միայն մերկութիւնը ծածկելու համար լինի կարծես:

Այսպէս ամեն տեղ խնայողութիւն և ամեն մի խնայողութիւն ի վնաս մարմնի, ի վնաս ֆիզիքական առողջութեան: Իսկ հոգին, միտքը, բարոյականութիւնը, այստեղ էլ ոչ մի գործ չունին. նրանք կարծես փոխւել, անյայտացել են այդ խումբ բանւորների աշխարհից:

Այս բոլոր ասածներս վերաբերում է հասարակ բանւորների «շուտ վերադառնալ» ուղեցող մասին, լինի դա հաց, լեզգի, պարսկահայտակ—միւսնոյն է:

Սրանցից այնքան էլ հեռու չեն գնում մշտական բանւորները: Զանազանութիւնը նրանումն է, որ վերջիններս ծախսում են իրանց բոլոր ստացածը, իսկ միւսները խնայում են մի մասը: Բայց որովհետեւ մշտական բանւորներն առհասարակ դալիս են ընտանեքներով, դրա համար էլ այդ երկու տեսակ բանւորների ապրուստը համարեան կրկին գալիս հաւասարւում են:

Ամբողջ օրն աշխատել --այն էլ ի՞նչ տեսակ աշխատանք -- և,

յանկարծ, չոր հացից զատ ուրիշ ոչինչ չգտնել ուտելու... անտա-
նելի է: Պատահում են դեպքեր, երբ 6—8 հոգի պարսկահայատակ
բանւորներ հաւաքւում են ճաշելու միասին: Բոլորի համար զնում
են ամենաստոր տեսակի հաց, մի կտոր սոխ, մի կամ երկու դա-
պուճ կամ քուժում կոչւած չոր ու անհամ ձուկ, դնում
մէջ տեղը, շրջան կազմում, բոլորում ու անուշ անում: Եթէ այդ
ժամանակ մի ինտելիգէնտ մարդ նայի դրանց վրայ, թէ ինչ ակոր-
ժակով, ինչ ազահուժիւնով են ուտում այդ ծաշի նմանութիւն
կրող ողորմելի ուտեստը, պարզ կը տեսնեն, թէ ինչ ասել է սև
հացի կարիք, թէ ուր կարող է հասցնել այդ կարիքը մարդուն, այն
ժամանակ նա կըմբռնէ, թէ, յիրաւի, որքան թշուառ, որքան ողոր-
մելի է մարդկութիւնը, երբ նրա մեծ մասը, որի ձեռքով է ար-
դիւնագործւում նիւթական հարստութիւնը, դժարութիւնով է
կարողանում ճարել այդ չնչին կերակուրը, այդ սև հացը, չնայե-
լով իր գործ դրած դժոխային աշխատանքին... Իսկ մարդկութեան
փոքրամասնութիւնը, հարուստը, ուրիշ երգ է երգում:

Ապրուստի մասին այս բոլոր ասածներս ընդհանուր է բոլոր
մշակ-բանւորների համար: Ընդհանուր մակերևոյթից փոքր ինչ
բարձր է կանգնած գերմանացի և ռուս բանւորը: Սրանք ունին
իրանց որոշ կուլտուրական պահանջները և ազգային առանձնապատ-
կութիւնները, որոնցից յետ կանգնել չեն կարող: Նրանց անհրաժեշտ
է թէյ, շաքար, համեմատաբար աւելի տանելի հազուստներ ու կո-
շիկներ, շաքարեղան գոնէ մի երկու անգամ արագ և այլն: Ահա
պահանջների այս զանազանութիւնը ծնեցնում է և վարձագնի զա-
նազանութիւն այդ ազգերի բանւորների համար:

Ուրիշ է արհեստաւոր-բանւորի ապրուստը: Վարձագնի համե-
մատական առաւելութիւնը հնարաւոր է դարձնում սրանց համար
տելի չարմար ապրուստը: Այստեղ ևս իսկոյն աչքի է ընկնում
ազգութիւնների վարած կեանքի տարբերութիւնը. գերմանացի և
ռուս արհեստաւորն աշխատում է տանելի կերպով ապրել, ուշք
չդարձնելով, որ բոլոր ստացածը ծախսում է և դեռ շատ ժամանակ
պարտքի տակ էլ է մնում, իսկ հայ արհեստաւորը մտածում է, որ-
քան կարելի է նեղ ապրել, փող յետ զգել: Պէտք է նկատել, որ ար-
հեստաւոր-բանւորներն առ հասարակ ընտանիքի տէր են լինում,

դրա համար էլ զժամար է նշխարել, որ և՛ ընտանիք կերակրի, և՛ յետաձգի որ և է բան: Որքան էլ զերմանացի և ուսու բանւորներն ուզենան մարդավարի ապրել, այնու ամենայնիւ ընտանիքի համարեան մշտական ներկայութիւնը, նիւթական դրութիւնը և տեղական թանգ պայմանները չեն թոյլ տալիս իսկապէս աւելի տանելի դարձնելու իրանց կեանքը: Երկու-երեք ընտանիք մի փոքրիկ սենեակում ապրել, երբեմն էլ մի կամ երկու ամուրի արհեստաւորներ նախասենեակում վարձով զիշերելիս, մեծ մասով միայն տեղաշորն ամբողջ հարստութիւնը կազմող, ընդհանրապէս անզաւակ, մինչև «ПОЛЫЧКА»-ի օրն այս և այն խանութից պարողով ապրող — ահա այդ արհեստաւոր-բանւորների ընտանիքի դրութիւնը մօտաւորապէս:

VIII Առողջապահական, մտաւոր և բարոյական դրութիւնը: Աղալի և ինտելիգենտ աշխատաւորների դիրքը գէպի բանւորները և փոխադարձը:

Բնակարանների, հագուստի և ապրուստի նխարադրութիւնից պարզ երևում է, որ նաւթաշրջանի բանւորների առողջապահական դրութիւնը չի կարող «լաւ» կամ «տանելի» լինել: Ի՞նչ առողջապահութիւն, երբ բնակարանի օդը բաւական չէ մէջը քնողներին. ի՞նչ առողջութիւն, երբ այդ բնակարանը նման է մի գոմի, քան սենեակի. ի՞նչ առողջութիւն, երբ մարդ ստիպւած է հազնել այն, ինչ ամենից աժան է և ոչ այն ինչ աւելի ջարմար է իբրև հագուստ: Ի՞նչ առողջութիւն, երբ մարդու անկողնի, բոլոր շորերի, գլխի և մորուքի մազերի մէջ վխտում են պարազիտ միջատների լէզէօններ, երբ նոյն իսկ մարմնի կաշին կլոր տարին կեղտի մէջ նեխւում, փթում է և վերքեր զոյացնում: Վերջապէս ի՞նչ առողջութիւն, երբ մարդ ստիպւած է ուտել այն, ինչ ամենաէժանն է, չնայելով որ մարսելն անկարելի է:

Բանւորական կեանքի բոլոր պայմանները միացել են իրար հետ կարծես միայն ոգորմելի մարդոց առողջութիւնը քայքայելու, նրանց կամաց-կամաց մաղելու, թուլացնելու համար: Ոչ մի առողջապահական պայման միութեարական չէ բանւորի համար նաւթաշրջանի բոլոր մասերում: Նաւթափաշտում նաւթի հոտը, կեղտը, բազմաթիւ ծխնելոյղներից բարձրացող մուրը (БОПОТЬ), ուր սև ձիւնի

նման քուլայ-քուլայ իջնում է եղանակի հանդարտ ժամանակը առանց այն էլ մրոտած կանաչների վրայ. նոյն ծխնելոյզների ծուխը, բազմաթիւ շոգեմեքենաների և մղիչների վրայ ածուղ իւղերի գարշելի հոտը, որ առաջանում է այդ իւղի ալրելուց, որի մէջ տարածւած առատ շոգին, որ բաց է թողնւում նաւթադաշտի ամեն մի անկիւնից և այլն և այլն.—այս բոլորը միանալով ստեղծում են մի այնպիսի մթնոլորտ, որի մէջ շնչելու համար շատ ամուր օրգանիզմ պէտք է ունենալ։ Նրբեմն, նոյն իսկ գարնան սկզբներում, ծովային շոգին առաւօտներն այնպէս է ծանրանում, ամպանման պատում ամբողջ նաւթադաշտը, որ առանց այն էլ ծանր մթնոլորտը դառնում է բոլորովին խեղդու, բոլորովին անտանելի։

Նաւթագործարանների օդն աւելի անտանելի է իր գարշահոտութիւններով. նաւթադաշտի բոլոր պայմանների վրայ աշտեղ աւելանում է և կաշաքարի (потах), աղաթթւի և ուրիշ նիւթերի զգւելի հոտը։ Այդ տեղի օդն անսովոր մարդու համար արդէն բոլորովին անտանելի է. առաջին անգամ լսնողը կարող է նոյն իսկ սիրտը վերածել։

Ի հարկէ նոյն պայմանները մասամբ ազդում են դրամատերերի և ինտիլիգենտ աշխատաւորների վրայ ևս, բայց նախ նրանց նիւթական պայմանները—հագուստը, ապրուստը, բնակարանները—անհամեմատ աւելի ազատ են պահում այդ փաստակար ազդեցութիւնից և երկրորդ, որ արդէն յոգնած, ուժասպառ մարմինն աւելի տրամադրւած է շուտ հիւանդանալու, քան մկանների և ջղախն ոյժը պահպանած թարմ օրգանիզմը։ Իսկ հանգստութիւնը, խեղճ բանւոր. նրան այդ ժամանակն էլ հալածում են մեքենաների դրկեք ու չըխկը, շոգու և շւինների աղմուկը, մանող-եղնողների անդադրում ոտնաձայները։ Ի հարկէ մարդկային օրգանիզմը յարմարւել՝ կարող է շատ պայմանների, այդ անժխտելի է, բայց նոյն իսկ այդ յարմարւելը տանում է նրան դէպի դանդաղ մահ, դէպի «ծանր», բայց անխուսափելի քայքայումն։

Առողջապահական ոչ մի զանցառութիւն չի կարող մնալ առանց որոշ հետեւանքի։ Բանւորի բնակարանի օդը բաւական չէ, սենեակը կեղտոտ է, պարազիտ միջատներով լցւած է ամբողջ մարմինը, նրա քունը «հարամ» են անում համարեան միշտ—այդ բոլորը չեն կարող

չարտայայտել նրա օրդանիզմի վրայ, եւ արտայայտում էլ են: Ամեն մի բանւորի աւաւտեան դալկացած, դեղնած դէմքը, նրա հանգած աչքերը, յոգնածութեան կնիք կրող ամբողջ մարմինը, նոյն խոկ խօսելու ձանձրացած, «անիշտահ» տոնը կենդանի բողոքներ են այդ պայմանների դէմ: Այդ բողոքների ձայնը չափազանց զօրեղ է բանւորի դրուժիւնը հասկացող մարդու համար և միայն դրամի հաւատարիմ երկրպագուների քարացած սիրտը չի թողնում լսելու այդ բարձր ձայնը: Զայն, որ լսելի է միայն զգացմունքների ականջին, ձայն, որ չի հասնում մարմնական ականջին, եթէ մարդու զգացմունքներն ու համոզմունքները չեն հասել մի որոշ զարգացման: Եւ այդ ձայնը դեռ մնում է անլռելի դրամատիրոջ և հասարակութեան բոլոր ունեւոր մասի համար: Մարդ կարող է մտքով ըմբռնել, հասկանալ շատ բան, բայց այդ միակողմանի հասկացողութիւնը դեռ ամբողջ «հասկանալու» կէտն է: ամեն մի գաղափար պէտք է ըմբռնել և զգացմունքներով, հակառակ դէպքում խօսքը և գործը շատ տարբեր կը լինին նոյն անհատի մէջ: Այդ պակասութիւնը նշմարւում է մարդկային հասարակութեան շատ գործերում, նոյնը նշմարելի է և այս դէպքում: Ինտելիգենտ աշխատաւորներից շատերն լսելքով են «հասկանում», բայց շատ քչերն են կարողանում մտնել բանւորի դրուժիւնը, զգացմունքներով ևս հասկանալ այդ դրուժիւնը:

(Կը շարունակւի)